

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(2016-2020 թթ.)

ԵՐԵՎԱՆ 2020

ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագիր 2016-2020թթ.:

Ջեկույց 4 ուս.տարում 46 էջ: Սույն զեկույցում ներկայացվում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի խնդիրների իրականացմանն ուղղված 4 ուս.տարվա գործողությունների կատարողականը: Ջեկույցի նպատակն է թափանցիկ և հրապարակայնորեն ներկայացնել համալսարանի զարգացման ռազմավարական խնդիրների ուղղությամբ իրականացված աշխատանքները, ապահովել գործունեության հաշվետվողականությունը համալսարանական և լայն հանրության առջև: Ջեկույցը հնարավորություն է ընձեռում մշտադիտարկելու ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացը, վեր հանելու առկա խնդիրները և առաջարկելու դրանց լուծման հնարավոր ուղիները:

ՆԱԽԱԲԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը 2016-2020 ուս.տարում իր գործունեությունը կազմակերպել և իրականացրել է ՀՊՄՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված նպատակներին և խնդիրներին համապատասխան: Հիմք ընդունելով կրթության համակարգի վերջին տարիների ձեռքբերումները և մարտահրավերները՝ 2016-ին իրականացված ՀՀ բարձրագույն կրթության վրա ազդող մակրո և միկրո գործոնների վերլուծությանը, ինչպես նաև «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից ՀՊՄՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցը /2015թ./, և հավատարմագրման գործընթացին ներկայացված փորձագիտական եզրակացությունները՝ վերաձևակերպվել է համալսարանի առաքելությունը, տեսլականը, արժեքները և զարգացման ռազմավարության հիմնական ուղենիշները:

ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրում /2016-2020թթ./ մշակվել է բուհի նախորդ զարգացման ռազմավարական ծրագրի /2011-2015թթ./ յուրաքանչյուր ուղենիշի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների /ԳԱՑ/-երի և ՀՊՄՀ-ի գործունեության վրա ազդող գործոնների SWOT վերլուծությանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունքների, ՀՊՄՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցի խորհրդատվություններին համապատասխան բուհի կողմից հաստատված բարելավման գործողությունների պլանի /2015թ./ հիման վրա՝ հաշվի առնելով համալսարանի շահակիցների առաջարկությունները: ՀՀ բարձրագույն կրթության վրա ազդող մակրո և միկրո գործոնների վերլուծություն ուսումնասիրության եզրահանգումները ևս հաշվի են առնվել զարգացման ռազմավարական ծրագիրը մշակելիս: ՌԾ-ով սահմանված ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված խնդիրների կատարումը միտված է համալսարանում որակյալ կրթության ապահովմանը, բարձրորակ

կրթության նորագույն մոտեցումներին, արդիական հետազոտությունների և նորարարությունների իրականացմանը, մարդկային ռեսուրսների կառավարմանը, կողմնորոշված դիմորդներ և ուսումնառողներին, արդյունավետ կառավարմանը, ֆինանսական կայունությանը, հանրային ներգրավմանը, սոցիալական համագործակցության և ծառայություններին և համապատասխանության բարձրացմանը, ֆինանսական կայունությանն, ինչպես նաև արտաքին կապեր և միջազգային գործունեության ընդլայնմանը, ամրապնդմանն ու գործունեության միջազգայնացման խթանմանը: ՌԾ իրականացման ժամանակացույց-պլանով սահմանված են այդ խնդիրների համապատասխան գործողությունների կատարման ժամկետները և պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Ստորև ներկայացվում է 2016-2020թթ.-ի ընթացքում այդ խնդիրների իրականացման կատարողականը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

I. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

« Բարձրորակ կրթության նորագույն մոտեցումներ » ռազմավարական ուղղության 1-ին նպատակն է « Տրամադրել ուսանողի կրթական կարիքներին և աշխատաշուկայի բավարարվածությանը համահունչ կրթական ծրագրեր, հազեցած կրթական արդիական մեթոդաբանությամբ և տեխնոլոգիաներով » :

Համաձայն սույն ռազմավարական նպատակի խնդիր 1,1-ի, այն է. «Իրականացնել մասնագիտական կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումներ՝ ՀՀ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին» իրականացվել է՝

2016 թվականից ՀՊՄՀ-ն անցել է ՄԿԾ-ների արդիականացմանը, ուսումնառության վերջնարդյունքներով սահմանմանը և որակավորումների ազգային շրջանակի ու աշխատաշուկայի պահանջների հետ համադրելիության ապահովմանը: Կատարվել է հենանշում՝

ա/ այլ հաստատությունների նույն որակավորման ԿԾ-երի հետ,

բ/ ՀՀ դպրոցական առարկայական չափորոշիչների հետ (մանկավարժական մասնագիտությունների համար), համադրելիության ուսումնասիրում՝ ՄԿԾ կրթական ելքային արդյունքների որակավորումների ազգային շրջանակին և ոլորտային շրջանակին համապատասխան:

ՀՊՄՀ ՄԿԾ-երի բարելավման շրջանակներում իրականացվեցվել են՝ ՄԿԾ-երի վիճակի ուսումնասիրություն (ամբիոնների կողմից), նույնանուն ծրագրերի համեմատական վերլուծություն, ուսումնասիրվել են այլոց դասավանդման և ուսումնառության մեթոդներն և դրանք սեփական կրթական գործընթաց ինտեգրելու հնարավորությունը :

Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության անմիջական ղեկավարությամբ բոլոր ֆակուլտետներում ձևավորվել են 12 աշխատանքային խմբեր՝ արտաքին և ներքին շահակիցների ընդգրկմամբ/աշխատանքային խմբերի կազմ:

ՀՊՄՀ-ում ՄԿԾ-երի բարելավման հաջորդ քայլը 2017-2018 թթ եղել է որակավորումների ազգային շրջանակին համադրելու գործընթացը: Սույնը իրականացվել է համագործակցելով Լինշոպինգի, Օրհուսի համալսարանների փորձագետների հետ: Փոխադարձ այցերի ընթացքում մշակվել մեթոդական նյութեր, իրականացվել են քննարկումներ, ՄԿԾ մշակման պատասխանատուների վերապատրաստումներ:

12 աշխատանքային խմբերի կողմից իրականացվել է ՄԿԾ առկա վիճակի գնահատում և կարիքների վերլուծություն, հենանշում: Աշխատանքային խմբերը վերանայել են ֆակուլտետների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագրերն ու ուսումնական պլանները:

Վերանայմանը համապատասխան՝ դասախոսների կողմից վերամշակվել են բոլոր դասընթացների առարկայական նկարագրերը: Ապահովվել է որակավորումների ազգային շրջանակի բնութագրիչների հետ բուհի մասնագիտությունների կրթական ծրագրերի վերջնարդյունքների համադրելիություն: Արդյունքում ՄԿԾ-երի մասնագրերում ներառված դասընթացներն ապահովում են վերջնարդյունքների՝ որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համադրելի գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերումը:

ՄԿԾ-երի բարելավման ճանապարհին աշխատանքային խմբերն իրականացրել են հենանշում /բենչմարքինգ/ և որոշել է յուրաքանչյուր ՄԿԾ-ի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները՝ SWOT վերլուծություն:

2017-2018 թթ իրականացվել է ՀՊՄՀ ՄԿԾ-ի առարկայակազմի գույքադրական վերլուծություն՝ ուսումնասիրելով տեղական և միջազգային նմանօրինակ կրթական ծրագրերի առարկայացանկերը, ՀՊՄՀ ՄԿԾ-ի առարկայակազմի գույքադրական

վերլուծություն՝ ուսումնասիրելով հայաստանյան և արտասահմանյան նմանօրինակ կրթական ծրագրերի կրեդիտային բաշխվածությունը/ժամաքանակը: ՀՊՄՀ ՄԿԾ-ի առարկայակազմի զուգադրական վերլուծություն՝ ուսումնասիրելով դասընթացների դասավանդման պարտադիր հաջորդականությունն ու դրանց փոխկապակցվածությունը: ՀՊՄՀ ՄԿԾ-ի առարկայակազմի զուգադրումը դպրոցական ծրագրերի չափորոշիչների հետ:

Բարելավվել են կրթական ելքային արդյունքները և դրանց համապատասխան գնահատման և դասավանդման/ուսումնառության մեթոդները, բարելավվել են մասնագիտական ուսումնական պլանները՝ հաշվի առնելով նաև դպրոցական առարկաների չափորոշիչները, հստակեցվել մասնագիտական առարկաների համար նախապայման հանդիսացող առարկաները:

Առանձնահատուկ ուշադրության են արժանացել կրթական ելքային արդյունքների և ուսումնառողների ծանրաբեռնվածության ու կրեդիտների հաշվարկման գործընթացների փոխկապակցման արդյունավետ կազմակերպումը:

Ըստ նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցի՝ կրեդիտների հաշվարկման և ըստ ուսումնական գործընթացների բաշխման վերաբերյալ ընդհանուր համալսարանական մոտեցում չկար: Մշակվել է կրեդիտներով արտահայտված ուսումնական բեռնվածության որոշման համընդհանուր մեթոդաբանություն, ըստ որի ուսումնական բեռնվածության հիմնավորված և համարժեք հաշվարկման համար սահմանվում է քայլերի հաջորդականություն, որոնք՝ մանրամասն ներկայացվել են ուղեցույցների շրջանակներում: Մասնագրերը, ուսումնական պլանները, առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումներն թափանցիկ հասանելի են ASPU կայքէջի առցանց տարածքում, իսկ կրթական ծրագրերի համար մշակված ուսումնամեթոդական փաթեթները հասանելի են ներքին օգտատերերի համար [/@aspu.am-ին](mailto:@aspu.am) շրջանակներում/ Google Classroom-ում:

«Վերանայել մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերը (առկա և հեռակա

ուսուցման համակարգերի համար)» խնդրի առումով իրականացվել են մագիստրոսի կրթական ծրագրերի ուղղությամբ նախատեսված աշխատանքները, վերանայվել և լրամշակվել են առկա և հեռակա ուսուցման համակարգերի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերը, որոնք ընդհանրացվել են մեկ միասնական փաստաթղթում, որը հաստատվել է ՀՊՄՀ գիտական խորհրդի նիստում: Այն նույնպես տեղադրված է ՀՊՄՀ Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի պաշտոնական կայքէջում:

/ԽՆԴԻԲ 1.1. Քայլ 4/ Վերանայել հենանշման /բենչմարք/ կարգը և լավագույն փորձի ուսումնասիրության ու տարածման քաղաքականությունը:

Ստեղծվել է հենանիշման անցկացման մեթոդական ուղեցույց:

/ԽՆԴԻԲ 1.1. Քայլ 5/ ՄԿԾ առկա վիճակի գնահատում, կարիքների վերլուծություն: Մշակվել են կարիքների վերհանման մոտեցումները, անց են կացվել սոցիոլոգիական հարցումներ:

/ԽՆԴԻԲ 1.1. Քայլ 5/ Ազգային և ոլորտային շրջանակներին համապատասխանեցում:

ՀՊՄՀ ՄԿԾ-ների կրթամասերը և վերջնարդյունյունքները համապատասխանեցվել են Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին:

/ԽՆԴԻԲ 1.1. Քայլ 5/ Նմանօրինակ ծրագրերի հենանշում (բենչմարք):

Իրականացվել է հենանիշում (բենչմարք): Արդյունքում վերանայված կրթական ծրագրեր՝ ազգային և միջազգային պահանջներին մոտեցված:

Ապահովել դասավանդման, ուսումնառության և արդյունքների գնահատման միասնական չափանիշների գործարկումը կրթական ծրագրերում: Ստեղծվել է մեթոդական ուղեցույց: ՄԿԾ-ներում միասնականացվել են դասավանդման, ուսումնառության և արդյունքների գնահատման միասնական չափանիշները:

Նախաձեռնել և իրականացնել Համալսարանի կրթական գործունեության ինքնագնահատման գործընթաց՝ համալսարանի կրթության որակի բարձրացմանն

ուղղված միջոցառումների պարբերական մշակման համար /ԽՆԴԻԸ 1.2. Քայլ 3/-ի հիման վրա իրականացվել է 1. Ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույց: 2. Ինստիտուցիոնալ հավատարմագրում:

/ԽՆԴԻԸ 1.4. Քայլ 8/

Մշակել կրթական ծրագրերի և ուսումնական գործընթացի արդյունավետ և որակյալ կառավարման համար պահանջվող ներքին տեղեկատվության փաթեթներ:

Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի պաշտոնական կայքէջում էլեկտրոնային ՄԿԾ-ներ և առարկայական նկարագրերի լիարժեք փաթեթ:

/ԽՆԴԻԸ 1.5. Քայլ 1-5/ Ստեղծել նորարարական կրթական միջավայր ուսանողների և դասախոսների շրջանում կրթական էլեկտրոնային հարթակի և համացանցի սոցիալական ռեսուրսների, սոցիալական մեդիայի միասնականացման միջոցով: /

Արդյունքում՝

- ✓ Գործարկվել են միասնական չափանիշներով դասավանդման, ուսումնառության և արդյունքների գնահատման գործընթացներ:
- ✓ ՄԿԾ-ներում 5%- ով ավելացել է գործնական բաղադրիչը:
- ✓ ՄԿԾ-ների վերաբերյալ առնվազն 1 դրական արտաքին կարծիքի առկայություն /արտաքին փորձագետ, այլ բուհ, գործատու/:
- ✓ Դասավանդման և ուսումնառության վերաբերյալ շահակիցների 72.3% բավարարվածություն:
- ✓ Ուսանողների առնվազն 80%-ը բավարարված է տրամադրվող ծառայություններից
- ✓ Պրակտիկայի վայրերից կազմակերպիչները դրական կարծիք են տվել ուսանողների գործնական կարողությունների վերաբերյալ:

- ✓ Շրջանավարտները առնվազն 78%-ով բավարարված են ՄԿԾ-ից:
- ✓ Գործատուների առնվազն 70%-ը դրական է գնահատել ՄԿԾ-երը :
- ✓ Մշակվել են կրթական ծրագրերի և ուսումնական գործընթացի արդյունավետ և որակյալ կառավարման համար պահանջվող ներքին տեղեկատվության փաթեթներ /Էլեկտրոնային ՄԿԾ-ներ և առարկայական նկարագրեր/:
- ✓ Վերամշակվել են ուսանողների գիտելիքի, կարողության հմտության գնահատման կարգ, ուսանողի բողոքարկման կարգ:
- ✓ Ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակում 9 Մասնագիտական կրթական ծրագրեր ներկայացվել են որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին:
- ✓ Ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով նախաձեռնվել և իրականացվել է Համալսարանի գործունեության ինքնագնահատման գործընթաց:
- ✓ Կազմվել է Ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույց:

Հստակեցվել են թեզերի և ավարտական աշխատանքների պատրաստման և գնահատման գործընթացները, մտցվել են դրանց կատարման ընթացքի մոնիթորինգի մեխանիզմներ, գնահատման չափանիշներ և չափորոշիչներ: Մասնավորապես, «ՀՊՄՀ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգում» ամրագրվել է, որ թեզի նախնական պաշտպանության ընթացքում գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը չի թույլատրվում հրապարակային պաշտպանության, իսկ թեզի հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»: Նույն պահանջներով դրույթներ տեղ են գտել նաև «ՀՊՄՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգում»,

որը հաստատվել է ԳԽ նիստում:

ՄՇԱԿՎԵԼ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՎԵԼ ԵՆ ՍՏՈՐԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

- ✓ ՀՀ բարձրագույն կրթության վրա ազդող մակրո եվ միկրո գործոնների վերլուծություն
- ✓ ՀՊՄՀ շահակիցների ներգրավման ծրագիր
- ✓ Մշակվել է վերամշակվել են շուրջ 20 կարգեր, 2 ղեկավար ուղեցույց, 6 մեթոդական ուղեցույց
- ✓ դասավանդման, ուսումնառության մեթոդների և գնահատման միջեվ կապը,
- ✓ Կրթական էլքային արդյունքների սահմանումը
- ✓ Բենչմարկի (հենանշման) ուղեցույց
- ✓ ՀՊՄՀ ուսանողի ուղեցույց
- ✓ հպմհ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը եվ բովանդակությունը
- ✓ հպմհ մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը եվ բովանդակությունը
- ✓ ՀՊՄՀ մասնագիտական կողմնորոշման աշխատանքի համակարգման ուղեցույց

Խնդիր 1.1

Գիտական խորհրդի կողմից հաստատվել են`

- բակալավրի կրթական ծրագրի **առկա** ուսուցման համակարգի թվով **44 մասնագիտությունների ուսումնական պլաններ,**
- բակալավրի կրթական ծրագրի **հեռակա** ուսուցման համակարգի թվով **38 մասնագիտությունների ուսումնական պլաններ**
- մագիստրոսի կրթական ծրագրի **առկա** ուսուցման համակարգի թվով

55 մասնագիտությունների ուսումնական պլաններ,

- մագիստրոսի կրթական ծրագրի **հեռակա** ուսուցման համակարգի թվով

6 մասնագիտությունների ուսումնական պլաններ

- Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությունը ARMENQA ծրագրի շրջամակներում մասնակցել է ՈԱՇ-ի մշակմանը
- Մշակել և ԿԳՆ ներկայացրել «Կրթության» որակավորման ոլորտային շրջանակը: Կատարել է «Մաթեմատիկա» և «Տարրական կրթություն և մեթոդիկա» կրթական ծրագրերի **ենթաօլորտային շրջանակների մշակում**: ՄԿԾ-երի համադրում ՈԱՇ-ի և ՈՈՇ-ի հետ:
- Իրականացվել են՝
- ՄԿԾ-երի բովանդակության և բուհի առաքելության, ուսումնառության ակնկալվող արդյունքների համապատասխանության, ՀՀ ՈԱՇ-ի, դպրոցական չափորոշիչների հետ համադրելիության ու գործիքակազմի առկայության ուսումնասիրում:

Խնդիր 1.2

- Մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանությունը և գնահատումը սկսվել է իրականացվել էլեկտրոնային հարթակում:
- Բարելավվել են հետազոտական աշխատանքների ղեկավարման մեխանիզմները, հարցումների արդյունքում արված ուսումնասիրությամբ հետազոտական աշխատանքների ղեկավարման արդյունավետությունը բարձրացել է 50%-ով:
- Ուսանողների և ղեկավարների համատեղ հրատարակված 75 հետազոտական հոդվածներ տեղական և միջազգային ամսագրերում

Խնդիր 1.3

- Սկսվել է պրակտիկայի, կարիերայի և ուսումնառության կողմնորոշման գործընթացների կառավարման միասնականացման գործընթացը, հավելվածներով լրամշակվել է պրակտիկաների անցկացման կարգը և քարտեզագրվել է անց կացման գործընթացը:

- Սկսվել են մասնագիտական զարգացման դպրոցների ստեղծման աշխատանքը: Պրակտիկայի կենտրոնը ընտրել է Մասնագիտական զարգացման և Համագործակցության 20 դպրոցներ, մշակել և կնքել է 20 ծրագրեր:
- Պրակտիկայի և մասնագիտական առաջընթացի մշտադիտարկման համար ներդրվել է Google classroom էլեկտրոնային թղթապանակի /վեբ-պորտֆոլիո/ համակարգը

Խնդիր 1.4

- Մշակվել է Համալսարանի գործունեության հիմնական ոլորտների, կրթա կան ստորաբաժանումների և միավորների ինքնագնահատման չափանիշ ներքը՝ հիմք ընդունելով միջազգային հավատարմագրող կազմակերպու թյունների և ՄԿՈԱԱԿ-ի որդեգրած հավատարմագրման չափորոշիչները և չափանիշները:
- 2016 թվականին մշակվել է դասախոսական կազմի գործունեության **բազմագործոն գնահատման վարկանիշավորման կարգի նախագիծը** և **գնահատման չափանիշները**: 2017 թվականին **իրականացվել է** դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման վարկանիշավորում:
- Ստեղծվել է www.qaedu.aspu.am կայքը Որակի կառավարման գործընթացի արդյունավետությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով:
- Անցկացվել են «Դասախոսն ուսանողի աչքերով» և «ՄԿԾ բավարարվածության բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն» հարցումները: Կատարվել են համապատասխան վերլուծություններ:

Խնդիր 1.5

- Google Classroom էլեկտրոնային համակարգում առկա ուսուցման համակարգի ուսանողների ներգրավվածությունը կազմում է **100%**:
- 2018-2019 ուսումնական տարվանից Google Classroom էլեկտրոնային համակարգում հեռակա համակարգի 1-ին կուրսերի ուսանողների ներգրավվում:
- Էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառման ԱՌԻՄՓ-երի համալսարանական ստանդարտների առկայություն և ուսուցման տեխնոլոգիաները կիրառող

դասախոսների 100% թվաքանակ

- Էլեկտրոնային ուսումնական նյութերի առկայություն՝ ներքին ցանցի Gsuit հարթակի միջոցով:

Առցանց ուսուցման հարթակ

- 1) Շարունակվել են աշխատանքները բարելավելու նորարարական կրթական միջավայրը սովորողների և դասախոսների շրջանում՝ կրթական էլեկտրոնային հարթակի և համացանցի սոցիալական ռեսուրսների, սոցիալական մեդիայի միասնականացման միջոցով,
- 2) զարգացել է կրթական գործընթացների սուբյեկտների ուսումնական համագործակցությունը Google For Education ճկուն և բաց տեղեկատվական-հաղորդակցական միջավայրի միջոցով.
- 3) հեռակա համակարգում մշակվել և ներդրվել է էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ինտերակտիվ դասընթացներին ներկայացվող պահանջներն ապահովող չափանիշներ և չափորոշիչներ.
- 4) շարունակվել են աշխատանքները վերապատրաստելու դասախոսներին՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և դասավանդման, իսկ սովորողներին՝ կիրառման և ուսումնառության համար.
- 5) ֆակուլտետների և ամբիոնների հետ մշակվել են դասախոսների և սովորողների գործունեության մշտադիտարկման ընթացակարգեր էլեկտրոնային առցանց ուսուցման և հեռավար կրթական տեխնոլոգիաների կիրառման պայմաններում:

- ✓ Կրթական ծրագրերի՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով ապահովվածության աճ 100%-ով.
- ✓ հեռակա ուսուցման դասընթացների ապահովված է էլեկտրոնային ռեսուրսներով.
- ✓ դասախոսները կիրառում է առցանց ուսուցման տեխնոլոգիաներ:

2. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի խնդիր 2.1-ով սահմանված է. «Զարգացնել համալսարանի գիտահետազոտական գործունեությունը, ձևավորել մրցունակ գիտական և նորարարական ներուժ, աստիճանաբար անցում կատարել համալսարանի հետազոտական կարգավիճակին»:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Նպաստել համալսարանում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը»:

/ԽՆԴԻԲ 2.1 Քայլ 3/ Նպաստել միջազգային և հանրապետական գիտական ծրագրերի մրցույթներին դասախոս գիտնականների մասնակցության աճին:

Միջազգային և հանրապետական գիտական ծրագրերի մրցույթներին դասախոս գիտնականների մասնակցության թվի աճ 15 %-ով:

/ԽՆԴԻԲ 2.1 Քայլ 5/ Ապահովել գիտնականի զարգացման և կատարելագործման շարունակականությունը:

Միջազգային գիտական պարբերականներում գիտական պրոդուկտի հրատարակման աճ 10%-ով:

/ԽՆԴԻԸ 2.1 Քայլ 6/

Ստեղծել մրցունակ, սարքավորումներով հագեցած գիտական ինստիտուտներ, կենտրոններ և լաբորատորիաներ:

Սարքավորումներով հագեցած գիտական կենտրոններ/շախմատի ինստիտուտ/ և լաբորատորիաներ **/մուլտիմեդիոն լաբորատորիա/:**

/ԽՆԴԻԸ 2.1 Քայլ 6/ Նպաստել համալսարանի գիտական դպրոցների կողմից ստացված արդյունքների հիման վրա միջազգային և հանրապետական գիտաժողովների կազմակերպմանը:

ՀՊՄՀ-ի գիտական դպրոցների կողմից կազմակերպված միջազգային և հանրապետական գիտաժողովներ

•Արդիական և կարևորագույն արդյունքների առևտրայնացմանը ենթակա հետազոտական թեմաների թվաքանակի աճ **15 %-ով:**

•Պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ կատարված **10** հետազոտություններ:

•Միջազգային գիտական պարբերականներում գիտական պրոդուկտի հրատարակման աճ **10 %-ով:**

•Մրցունակ սարքավորումներով հագեցած գիտական **2 կենտրոններ և 4 լաբորատորիաներ:**

•ՀՊՄՀ-ի գիտական դպրոցների կողմից կազմակերպված **5 միջազգային և 9 հանրապետական գիտաժողովներ:**

•Գիտական հարթակ շտեմարաններին ինտեգրված **4 կառույցներ:**

/ԽՆԴԻԸ 2.2 Քայլ 1/ Նպաստել համալսարանի գիտնականների արժեքավոր և որակյալ աշխատությունների հրապարակմանը:

ՀՊՄՀ գիտնականների կողմից հրապարակված աշխատություններ:

/ԽՆԴԻԲ 2.2 Քայլ 2/ Նպաստել համալսարանի դասախոսների դասագրքաստեղծ գործունեության մասնակցությանը:

ՀՊՄՀ դասախոսների կողմից ստեղծված դասագրքեր:

/ԽՆԴԻԲ 2.2 Քայլ 3/ Նպաստել համալսարանի գիտնականների գիտական արդիական մենագրությունների հրատարակմանը:

Գիտնականների կողմից հրատարակված մենագրություններ:

/ԽՆԴԻԲ 2.2 Քայլ 3/ Ստեղծել արտասահմանյան գիտական համապատասխան կենտրոնների հետ բարձր վարկանիշ ունեցող համատեղ պարբերականներ:

Աշխատանքներ են տարվում «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» և «Հատուկ կրթության հիմնախնդիրներ» հանդեսները ներառելու միջազգային շտեմարաններում և հրատարակելու անգլերեն լեզվով:

•2017 թվականին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաշխատողների, ասպիրանտների և հայցորդների կողմից հրատարակվել են **575 հոդված**, որից **164-ը** SCOPUS, PIIHL, և այլն պարբերականներում, **10 մենագրություն, 95 ձեռնարկ, 60 գիրք**:

•Միջազգային պարբերականներում տպագրված հոդվածներից **114-ը** գիտական հղումների ռուսաստանյան ցուցիչում (PIIHL) են, իսկ մյուս **50-ը`** միջազգային այն պարբերականներում, որոնք ընդգրկված են Web of Science, Web of Knowledge, Scopus, British Library և այլ հեղինակավոր շտեմարաններում:

•Ծավալվել է **դասագրքաստեղծ գործունեություն**. ուսումնասիրվել է **թղթային և էլեկտրոնային դասագրքերին ներկայացվող չափորոշչային պահանջների միջազգային փորձը** և կատարվել **համեմատական վերլուծություն**: Գիտահետազոտական կենտրոնի կողմից կազմակերպած գրքերի 3 շնորհանդեսներ:


•«Իմաստություն» հանդեսը 2017 թվականից **Հրատարակչական էթիկայի հանձնաժողովի** (COPE - Committee on Publication Ethics) **անդամ** է:

•2017 թվականից ընդգրկված է **Scopus-ի** շտեմարանում:

•2017թ-ի ընթացքում իրականացվել են վերապատրաստումներ՝

ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում	ՀՊՄՀ կողմից պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում
114	255

•Գրանցվել է ասպիրանտների և հայցորդների թվի աճ



Փաստացի

- ✓ 2019 թվականին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաշխատողների, ասպիրանտների և հայցորդների կողմից հրատարակվել են 674 հոդված, որից 109-ը ցիտվող (SCOPUS, РИНЦ... և այլն) պարբերականներում, 68 մենագրություն, 41 ձեռնարկ, 17 գիրք, 18 դասագիրք:
- ✓ Միջազգային պարբերականներում տպագրված հոդվածներից 68-ը՝ (63%) գիտական հղումների ռուսաստանյան ցուցիչում (РИНЦ) են, իսկ մյուս 31-ը՝ (27%) միջազգային պարբերականներում կամ գիտաժողովներում, որոնք ներգրավված են Scopus, Web of Science, Web of knoweladge, British library և այլ հեղինակավոր շտեմարաններում:
- ✓ Գիտահետազոտական կենտրոնը կազմակերպել է պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ՝ 2018թ. 53 և 2019թ-ին 54 դասախոսների վերապատրաստում:

- ✓ 2019թ. Մանկավարժության և հոգեբանության մասնագիտական պաշտպանական խորհուրդներում պաշտպանվել են 20 ատենախոսություն, որոնցից՝ 10-ը մանկավարժությունից, իսկ 10-ը հոգեբանությունից:
- ✓ 2019թ. բուհում շարունակվել է հետևյալ գիտական հանդեսների հրատարակումը
 - «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ»
 - «Գիտական տեղեկագիր»
 - «Հայագիտական հանդես»
 - «Իմաստություն» պարբերական

2019թ. կազմակերպված միջազգային գիտաժողովներ

- «Հոգեբանական հիմնախնդիրներ. բնութագրերը, դասակարգման և ախտորոշման սկզբունքները»
- «Մաթեմատիկական կրթություն»
- «Կայսրությունների փլուզումը 20-րդ դարում. նոր պետություններ և նոր ինքնություններ»
- «Շախմատային կրթության արդի վիճակը և զարգացման միտումները»
- «Սովորողների խոսքի պրոֆիլային վերլուծություն (գերմաներենը որպես օտար լեզու)»
- «Թումանյան. Անհունի ճամփով»

Արդյունքում՝

→ Միջազգային և հանրապետական գիտական ծրագրերի մրցույթներին դասախոս գիտնականների մասնակցության թվի աճ:

→ Միջազգային գիտական պարբերականներում գիտական պրոդուկտի հրատարակման աճ շուրջ 10%-ով:

→ ՀՊՄՀ-ի գիտական դպրոցների կողմից կազմակերպված միջազգային և հանրապետական 10-ից ավելի գիտաժողովներ:

→ Արտասահմանյան գիտական կենտրոնների հետ 1 բարձր վարկանիշ ունեցող պարբերական և ստարտի պատրաստ ևս այդպիսի 2-ը:

Խնդիր 2.3. Նպաստել համալսարանում գիտական կադրերի պատրաստմանը և վերապատրաստմանը:

• ՀՊՄՀ-ում իրականացվել են վերապատրաստումների և որակավորումների բարձրացման 36 ժամյա կարճաժամկետ ծրագրեր:

ԽՆԴԻԲ 2.4. Աջակցել մտավոր գործունեության արդյունքների փոխանցմանը և առաջանցիկ կրթափորձի տարածմանը:

• Համալսարանի աշխատակիցների մտավոր գործունեության արդյունքների ներդրման հաշվին ստացված արտաբյուջետային միջոցների աճը 2017-ին կազմել է 4%:

ՓԱՍՏԱՑԻ՝

2016-2020 թվականների զարգացման ռազմավարական ծրագրում նախատեսել է հետազոտական ոլորտին առնչվող որոնք միտված են ակտիվացնելու գիտական հետազոտությունների, նորարարարական ծրագրերի, գիտահետազոտական կենտրոնի գործունեությունը, ամբիոնների և համալսարանի մակարդակով հստակեցնելու հետազոտական հետաքրքրություններն ու հավակնությունները, աջակցելու հետազոտությունների ծավալի մեծացմանը միջազգային գիտաչափական շտեմարաններում, ներգրավելով պրոֆեսորադասախոսական կազմին, ուսանողներին, ակտիվացնել հետազոտական համագործակցությունը ազգային և միջազգային մակարդակում:

Համեմատած նախորդ հավատարմագրման գործընթացի արդյունքների հետ՝ ՄՈՒՀ-ում աշխատանքներ են ընթացել հետազոտական աշխատանքների ոլորտում, որոնցից առավել հատկանշական են.

➤ համալսարանի ռեկտորի 12.11.2015թ. թիվ 1-666-Ա հրամանի համաձայն գիտահետազոտական կենտրոնին կցվել են գիտաուսումնական աշխատանքների

համակարգման, մասնագիտական վերապատրաստումների բաժինները, համալսարանի բազային ֆինանսավորվող գիտահետազոտական ինստիտուտների և լաբորատորիաների շարքում նորաստեղծ Մաթեմատիկական կրթության և Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման գիտական լաբորատորիաները, որը հնարավորություն է տալիս հետազոտական գործընթացներն իրականացնել համակարգված տարբերակով մեկ միասնական գիտական քաղաքականության մոտեցման հիման վրա:

➤ Կենտրոնի կողմից շարունակվում են հրատարակվել մի շարք կանոնակարգեր և նորմատիվային ակտեր, որոնք միտված են կանոնակարգելու գիտնականի գործունեությունը և ստեղծելու նպաստավոր պայմաններ մտավոր ներուժի պահպանման և զարգացման համար:

Ինչպես նաև ստեղծվել են մշտադիտարկման մեխանիզմների մի շարք մոդելներ: Ավանդույթ է դարձել Գիտահետազոտական կենտրոնի կողմից Նորմատիվային տարբեր տեղեկատուների հրապարակումը:

2017թ. Գիտահետազոտական կենտրոնի և Գիտական գրադարանի համատեղ ջանքերով /հեղինակ՝ Տ.Պետրոսյանց/ կազմվել է 1968-2016թթ. մանկավարժության և հոգեբանության ատենախոսությունների մատենագրությունը:

➤ Կարևորագույն ձեռքբերում է խորհրդատվական գործունեությունը:

Գիտահետազոտական կենտրոնը այն կառույցն է, որտեղ գիտական արդյունավետ աշխատանքներ կատարելու նպատակով տրամադրվում է մասնագիտական խորհրդատվություն: Հաստատվել են արդյունավետ և սերտ ստեղծագործական կապեր դեկանների, դեկանների գիտության և միջազգային համագործակցության հարցերի գծով տեղակալների, ամբիոնների վարիչների և դասախոսների հետ: Այս տարի խորհրդատվություն ենք իրականացրել նաև մագիստրոսական ծրագրերում ընդգրկված ուսանողների համար:

Կարծում ենք, որ աշխատանքի այս ուղղությունը առավել մասսայականացման կարիք ունի:

➤ Կենտրոնի կողմից իրականացվել են տեղեկատվական-վերլուծական հետազոտություններ համալսարանի գիտական ներուժի վիճակի և զարգացման հեռանկարների պարզաբանման ուղղությամբ, որոնց արդյունքների հիման վրա կատարվել են նաև նախապատրաստական աշխատանքներ համալսարանում գիտահետազոտական կենտրոնի համակարգում գիտական նոր ենթակառուցվածքների ներդրման ուղղությամբ: Այդպիսի նոր ուղղություն է «Շախմատը դպրոցում» ծրագիրը, որի հիման վրա 2017 թվականին ՄՈՒՀ-ում բացվեց Շախմատի գիտահետազոտական ինստիտուտը:

➤ Տարեցտարի ավելանում է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության կողմից հրատարակվող հոդվածների թիվը, հատկապես միջազգային գրախոսվող պարբերականներում հրատարակված հոդվածների քանակական կազմը. համեմատած նախորդ տարիներին՝ ավելացել է համալսարանում հրատարակվող պարբերականների թիվը ևս երկուսով՝ «Պատմություն և հասարակագիտություն» տարեգիրք, «Ռուսագիտության արդի հիմնախնդիրները» գիտամեթոդական հանդես:

➤ Մանկավարժական համալսարանի «Իմաստություն» հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի՝ ատենախոսությունների հիմնա-կան արդյունք-ների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական ժողովա-ծուների ցանկում և գրանցված է Scientific Indexing Services (SIS), Journal Impact Factor (JIF), Eurasian Scientific Journal Index (ESJI), Scientific Journal Impact Factor (SJIF), International Scientific Indexing (ISI), European Reference Index for the Humanities and Social Sciences (ERIH PLUS), Advanced Scientific Index (ASI), eLIBRARY, EBSCO, CYBERLENINKA, CROSSREF, PHILPAPERS, WORLDCAT և Google Scholar միջազգային գիտաչափական շտեմարաններում: «Իմաստություն» հանդեսը 2017 թվականից Հրատարակչական էթիկայի հանձնաժողովի (COPE - Committee on Publication Ethics) անդամ է: Այն ընդգրկված է նաև Web of science և Scopus շտեմարաններում: Ժողովածուն հրատարակվում է անգլերենով տարեկան երկու անգամ և նպատակ ունի հարթակ լի-նելու գիտական արժեքավոր գաղափարների ու հետազոտությունների արդյունքները հրապարակելու,

դրանց շուրջ քննարկումներ ու բանավեճեր կազմակերպելու, ինչպես նաև երիտասարդ խոստումնալից հետազոտողներին ու նրանց ուսումնասիրությունները գիտա-կան հանրությանը ներկայացնելու համար:

➤ Ներկայումս աշխատանքներ են տարվում «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» /միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես/ և «Գիտական տեղեկագիր» պարբերականները նույնպես ընդգրկելու նմանատիպ շտեմարաններում:

➤ Ավելացել են նաև թեմատիկ և բազային ֆինանսավորվող, ինչպես նաև Բելառուսի և Ռուսաստանի հետ համատեղ իրականացվող գրանտային ծրագրերը:

➤ Մի շարք լաբորատորիաներ և հատկապես «Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիան» համալրվել է տարածաշրջանում եզակի սարքավորմամբ, որը նպաստել է սովորողների մոտ մագիստրոսական, թեկնածուական թեզերի իրականացմանը:

➤ Ակադեմիական ազնվությունն ապահովելու նպատակով ստեղծել ենք մագիստրոսական թեզերի էլեկտրոնային բազա:

➤ Ամբողջությամբ վերակառուցվել է բուհի վերապատրաստման և որակավորումների բարձրացման գործընթացը:

Համատեղ գիտական աշխատանքներ կատարելու նպատակով համալսարանը պայմանագրեր ունի ինչպես արտասահմանյան գիտական կառույցների՝

➤ Չեխիայի հանրապետության (Բուդվայզ քաղաք) Հարավային Բոհեմիայի համալսարան,

➤ Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարան և այլն, այնպես էլ տեղական այլ բուհերի, հիմնադրամների, գիտահետազոտական ինստիտուտների և գիտական կառույցների հետ՝

➤ ԵՊՀ,

➤ ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիական ինստիտուտ,

➤ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն,

- ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտ,
- ՀՀ ԳԱԱ մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտ,
- ՀՀ ԳՆ երկրագործության գիտական կենտրոն,
- Երևանի կենդանաբանական այգի ՀՈԱԿ,
- ՀՀ ԳԱԱ Հայկենսատեխնոլոգիա Գ/Ա կենտրոն,
- Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ,
- Կոմիտասի թանգարան-ինստիտուտ,
- Նորավանք հիմնադրամ:

Նմանատիպ գործընթացների շրջանակը ապագայում նախատեսվում է լայնացնել՝ ընդգրկելով հանրապետության առաջատար գիտական կենտրոնները:

➤ 2017 թվականի ընթացքում ցանցային համալսարանների և գիտակրթական կլաստերների ձևավորման միջոցով բուհի գիտահետազոտական կազմակերպության համագործակցության ապահովման հնգամյա գործընթացի վերաբերյալ Գիտահետազոտական կենտրոնը ներկայացրել է 10 առաջարկություններ:

➤ Տեղի են ունեցել նաև Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ դասախոսական կազմի այցերը այլ երկրների բուհեր՝ դասախոսություններ կարդալու նպատակով, միևնույն ժամանակ ունեցել ենք բազմաթիվ գիտնականների այցեր ՄՈՒՀ:

➤ Նորարարություն է նաև մագիստրոսների և բակալավրիատի սովորողների թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների փորձաքննությունը գիտահետազոտական կենտրոնում և նոր միայն հաստատումը ամբիոններում:

Այսպիսով, վերջին տարիների ընթացքում նկատում ենք վերոնշյալ բոլոր ցուցանիշների աճի միտում, հատկապես կարևորում ենք գիտական շարժունակության, համագործակցության, գիտական արդյունքերի որակական կողմի բարելավման գործընթացները:

3. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՆՊԱՏԱԿ: Զարգացնել համալսարանի մարդկային ռեսուրսների համակարգը, ապահովել որակյալ դասախոսական ներուժ և բարեկեցության մակարդակ, ժամանակակից աշխատանքային միջավայր:

ԽՆԴԻԴ 3.1, Քայլ 3 Կատարելագործել դասախոսի աշխատանքի տեղակալման չափանիշները և գործընթացները՝ սահմանելով դասախոսական կազմի մասնագիտական որակների հինգ կայացվող պահանջներ՝ ըստ կրթական ծրագրի ելքային արդյունքների:

Տարվել են աշխատանքներ կատարելագործելու դասախոսի աշխատանքի տեղակալման չափանիշները և գործընթացները՝ սահմանելով դասախոսական կազմի մասնագիտական որակների ներկայացվող պահանջներ՝ ըստ կրթական ծրագրի ելքային արդյունքների:


Կազմակերպել դասախոսների վերապատրաստում՝ տիրապետելու կրթական նոր տեխնոլոգիաներին, դասավանդման ինտերակտիվ մեթոդներին, մշակելու և իրականացնելու էլեկտրոնային ուսուցման դասընթացներ, իրականացնելու կրթական բարեփոխումներ և զարգացնելու որակի մշակույթ:

Որակավորման բարձրացում անցած և վերապատրաստված շուրջ 70% դասախոս, որոնք տիրապետում են կրթական նոր տեխնոլոգիաներին, դասավանդման ինտերակտիվ մեթոդներին, մշակում և իրականացնում են էլեկտրոնային ուսուցման դասընթացներ:

ԽՆԴԻԴ 3.1. Շարունակել համալրել պրոֆեսորադասախոսական կազմը՝ կրթական ծրագրերի որակի ապահովման արդի պահանջներին համահունչ:

•2017 թվականին իրականացվել է ֆակուլտետի, ամբիոնի, դասախոսական կազմի գնահատման վարկանիշային գնահատում: Ներկայացվել է պրոֆեսորադասախոսական առկա ներուժի գնահատման վերլուծական զեկույց և գնահատման փաթեթ:

•2018թ.-ին կատարելագործվել է դասախոսի աշխատանքի տեղակալման չափանիշները և գործընթացները, դասախոսական պայմանագրի 8-րդ կետում ավելացվել է ը) ենթակետը սահմանվելով՝ դասախոսը պետք է իրականացնի ուսումնական պարապմունքներ Google Classroom էլեկտրոնային հարթակում՝ ներառյալ ինտերակտիվ վարման ձևերը, հնարավոր տեխնիկական միջոցների օգտագործումը, բանավոր և գրավոր խոսքի զարգացման մեթոդների կիրառումը:



ԽՆԴԻԴ 3.2. Զարգացնել համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը, նպաստել վարչակազմի շարունակական համալրմանն ու որակական առաջընթացին:

•2017/18 ուս.տարում ուսանող-դասախոս քանակական հարաբերակցությունը շարունակում է մնալ 12:1, իսկ ուսանող-աշխատող քանակական հարաբերակցությունը՝ 8:1: Ցուցանիշները 2016/17 ուս. տարվա համեմատ մնացել են անփոփոխ: Ինչը վկայում է այն մասին, որ բուհը վարում է որակը չխաթարող, հաստիքախնայողական քաղաքականություն:

•2017թ.-ին մշակվել և պատրաստվել է ՀՊՄՀ հաստիքացուցակում ընդգրկված բոլոր պաշտոնների անձնագրերը և պաշտոն չհամարվող աշխատատեղերի նկարագրերը:

•2017թ.-ին անցկացվել է ՀՊՄՀ վարչական և ուսումնասովանդակ կազմի թափուր աշխատատեղի 20 մրցույթ, որից 17-ում հաղթել և անցել են աշխատանքի ՀՊՄՀ –ի լավագույն շրջանավարտներն և մագիստրանտները:

4. ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐ

ՆՊԱՏԱԿ: Կրթական գիտությունների ոլորտում ուսումնառողների մասնագիտական կողմնորոշում: Ապագա դիմորդների նախաբուհական ջակցման (ուղեկցման, ուղորդման) համակարգի զարգացում: Ուսումնառողների ներգրավում և առաջընթացի ապահովում համալսարանական միջավայրում:

ԽՆԴԻՐ 4.1. Համալսարանի՝ որպես սոցիալական կողմնորոշում ունեցող բուհի դրական վարկանիշի ստեղծում՝ ի նպաստ դիմորդների ներգրավման:

•30-ից ավել դպրոցների շուրջ 1000 աշակերտներ այցելել են համալսարանի թանգարան, գրադարան, աստղադիտարան:

•2017 թ.-ին Էլեկտրոնային ուսուցման հարթակում (Google for Education) ստեղծվել են ավագ դպրոցականների էջեր, ապահովվել է ավագ դպրոցականների Էլեկտրոնային էջերի 10 % կիրառում ուսումնական գործընթացում:

•Կազմակերպվել են դիմորդների ներգրավման և մասնագիտական կողմնորոշման այցեր ֆակուլտետների կողմից դպրոցներ, ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում: Կազմակերպվել են տարբեր միջացառումներ բուհի դրական վարկանիշի ապահովման և բարձրացման համար:

ԽՆԴԻՐ 4.2. Մշակել և կազմակերպել աշակերտների շրջանում ուսուցչի մասնագիտության գրավչության ամրապնդմանը, մանկավարժական կողմնորոշում ունեցող դիմորդների ներգրավմանը նպաստող միջոցառումներ:

•2018թ.-ին անցկացվել են դպրոցական օլիմպիադաներ թվով 6 ֆակուլտետների տարբեր ամբիոնների կողմից (Բ-1, ՊԻ-4, ՄԿ-8, ԿՔԱ-3, ՕԼ-10, ՄՖԻ-2)

•2017թ.-ին ստեղծվել և ինտենսիվ օգտագործվում են *Անվճար հեռավար ֆիզիկամաթեմատիկական դպրոց, Մասնագիտությունը՝ ինֆորմատիկա* ֆեյսբուքյան խմբերն ու *Տեխնոլոգիա և ձեռնարկչություն* ֆեյսբուքյան էջը, *Արմաթ* ռոբոտաշինական լաբորատորիայում ընդգրկված են աշակերտներ տարբեր դպրոցներից /ընդհանուր 20 աշակերտ 2018թ.ի դրությամբ/:

•2017թ.-ին Էլետրոնային ուսուցման հարթակում /Google for Education/ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետը և Նախապատրաստական բաժինը կազմակերպել են դասընթացներ դպրոցականների համար, տրամադրելով էլ. հասցեներ և համապատասխան էջեր,

•Հանրապետության կրթական հաստատություններում անցկացվել են մանկավարժական արդիական խնդիրներին նվիրված շուրջ 10 հանդիպումներ, սեմինարներ, գիտաժողովներ ՀՊՄՀ ամբիոնների կողմից:

•Պրակտիկայի առարկայական նկարագրերում պարտադիր ներդրվել են արտաուսումնական և արտադասարանական առաջադրանքների պահանջը, որոնց շրջանակներում պրակտիկանտները իրականացնում են մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ պրակտիկայի հիմնարկներում:

ԽՆԴԻԴ 4.3. Հանրակրթական հաստատությունների՝ մանկավարժական կրթություն ստանալուն միտված շրջանավարտների նախաբուհական աջակցման (ուղեկցման, ուղղորդման) համակարգի ստեղծում, նախաբուհական նախապատրաստման գործընթացում ընդգրկված մանկավարժներին մեթոդական օգնության ցուցաբերում:

•2017 թվականին ապագա դիմորդների ընդունելության քննություններին պատրաստվածության աստիճանը բարձրացնելուն նպատակաուղղված **երկարաժամկետ** կուրսերին մասնակցած բոլոր **38 աշակերտներն էլ** ընդունվել են համապատասխան մասնագիտություններով:

•Մանկավարժական միտում ունեցող դպրոցականների համար կազմակերպվել են

առանձին նախաբուհական նախապատրաստության պարապմունքներ: 2017 թվականին կարճաժամկետ կուրսերին մասնկացած բոլոր 11 աշակերտներն էլ ընդունվել են համապատասխան մասնագիտություններով:

ԽՆԴԻԸ 4.4. Մշակել միջոցառումների համակարգ, որը կնպաստի ուսումնառողների (բակլավր և մագիստրատուրա) շրջանում ուսանողական կազմակերպությունների դերի

բարձրացմանը և ուսանողական ինքնավարության ընդլայնմանը՝ նպաստելով ուսանողակենտրոն համակարգի զարգացմանը:

•2017-ին Ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվել են 2 կոնֆերանսներ՝ հողվածների տպագրմամբ:

•Լավագույն ուսանողների խրախուսման նպատակով իրականացվում են «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությունը, «Ամառային դպրոց» ծրագիրը, ինչպես նաև կազմակերպվում են ուսանողների ձմեռային հանգիստը Ադալնաձորի ուսումնամարզական բազայում:

ԽՆԴԻԸ 4.5. Բարձրացնել ՀՊՄՀ-ում ուսումնառությունից և ուսանողական օժանդակ ծառայություններից ուսանողների գոհունակության մակարդակը:

•Կրթական ծրագրերի պահանջներին համարժեք և մատչելի ուսումնառության օժանդակության ռեսուրսների ապահովման և զարգացման նպատակով ՀՊՄՀ-ում և 57 հիմնական դպրոցում բացվել են **11 լաբորատորիա, 14 լսարան, 1 գիտահետազոտական ինստիտուտ, 1 գիտաուսումնական կենտրոն, 3 նոր դասարան**

•Համալսարանի համակարգչային տեխնիկական համալրվել է մասնավորապես՝ համակարգիչ- **85**, դյուրակիր համակարգիչ- **35**, պրոյեկտոր -**15**, հեռուստացույց-**10**, ֆոտոօպերատորական սարք –սարքավորումներ և այլ արքեսուարներով:

•2017-2018 ուս տարում ավարտելուց անմիջապես հետո աշխատանքի են անցել **309 շրջանավարտ:**

•Մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թիվը 2017-2018 ուս տարում կազմել է **154:**

•2017-2018 ուս. տարվա ընթացքում շրջանավարտների և պոտենցիալ գործատուների հետ կազմակերպվել է 7 աշխատանքային հանդիպում:

•10 ֆակուլտետներում կազմակերպվեն և իրականացվել են տեղեկատվական-խորհրդատվական, շրջանավարտների կարիերայի նախապատրաստման, աշխատատեղերի որոնման ուղղությամբ դասընթացներ, որին մասնակցել են 375 ուսանող:

✓Շարունակվել են համագործակցային աշխատանքներ ՀՀ հանրակրթական դպրոցների հետ դպրոցականների մասնա գիտական կողմնորոշման հարցերով:

✓Պատրաստվել են դիմորդների մասնագիտական կողմնորոշ ման տեղեկատվական բրոշյուրներ:

✓ՀՊՄՀ կայքի «Դիմորդ» բաժնում առկա է տեղեկատվություն դիմորդների ընդունելության կարգի, քննությունների, վարձա վճարների և այլ հարցերի վերաբերյալ:

✓2018 թ.-ին 36 դպրոցների և քոլեջների շուրջ 844 աշակերտներ այցելել են համալսարանի թանգարան:

✓2019 թ.-ին 43 դպրոցների և քոլեջների շուրջ 1220 աշակերտներ այցելել են համալսարանի թանգարան:

✓Համալսարան- գործատու համագործակցության կենտրոնի և ֆակուլտետների հետ համատեղ աշխատանքի արդյունքում կնքվել են պայմանագրեր դպրոցների և կազմակերպությունների հետ, միտված ուսանողների և շրջանավարտների առաջընթացին:

✓Ավարտական կուրսի ուսանողների հետ կազմակերպվել են մի շարք հանդիպումներ Հայաստանի գործատուների միության, զբաղվածության կենտրոնի աշխատակիցների հետ, ՄԱԿ-ի գրասենյակի հետ:

✓ Համալսարանի բոլոր ֆակուլտետներում իրականացվել են սեմինար քննարկումներ ուղղված ուսանողների հետագա առաջընթացին:

✓2018-2019 ուս. տարում, ըստ մասնագիտությունների, համալսարանի ֆակուլտետներում անցկացվել են մասնագիտական գիտելիքի և հետազոտության խնդիրներով հետաքրքրվածության մակարդակի աճին նպաստող միջոցառումներ (առարկայական օլիմպիադաներ, ինտելեկտուալ խաղեր, մրցույթներ և այլն):

✓Հավաքագրվել և մշակվել է Համալսարանի շրջանավարտների տվյալների շտեմարանը:

ՄՇԱԿՎԵԼ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՎԵԼ ԵՆ

- [Ոսանողի ուղեցույց](#)
- [Ուսանողների հավաքագրման \(մասնագիտական կողմնորոշման\) քաղաքականությունը և ընթացակարգերը](#)
- [Ուսանողների ընդունելության անցկացման քաղաքականությունը և ընթացակարգերը](#)
- [Ընդունելության արդարությունը և թափանցիկությունն ապահովող ընթացակարգերը և հիմքերը](#)

5. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՆՊԱՏԱԿ 5. Բարելավել համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը:

Ապահովել համալսարանի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը:

Դառնալ նախաձեռնող համալսարանի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնման և դրանց բազմազանեցման հարցերում:

Ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական

ենթակառուցվածքներ:

2018/2019 ուս. տարում

✓ Իրականացվել են համալսարանի կառավարման արդյունավետությանը միտված կառուցվածքային փոփոխություններ:

✓ Իրականացրվել է համապատասխան ինտերակտիվ լսարաններում և դահլիճներում համակարգչային տեխնիկայի, ներառյալ պրոռեկտորների և էկրանների, ինչպես նաև հեռուստացույցների և տեսաձայնային այլ համակարգերի տեղադրման կազմակերպում, ընթացիկ տեխնիկական և ծրագրային սպասարկում, կիրառման հարցերում աջակցում:

✓ Շարունակվել է իրականացվել համալսարանի տեղեկատվական ռեսուրսների զարգացման ծրագիրն ուսումնական և գիտահետազոտական արդյունավետ գործունեության կարիքներին համահունչ:

✓ Կատարվել են վերանորոգման աշխատանքներ: Կատարվել են ուսումնական մասնաշենքերի աշխատասենյակների, լսարանների, լաբորատորիաների, միջանցքների, սանհանգույցների, տանիքների, ջեռուցման համակարգերի վերանորոգման, ինչպես նաև բարեկարգման աշխատանքներ:

ԽՆԴԻԲ 5.1. Շարունակել ռազմավարական հեռանկարում կատարելագործել համալսարանի կազմակերպական կառուցվածքի զարգացումը և կառավարման արդյունավետության բարձրացումը:

2017թ.-ին իրականացվել են կազմակերպական կառուցվածքի փոփոխություններ, գործառույթների հստակ տարանջատումներ, վերանայվել են ՀՊՄՀ հետևյալ ստորաբաժանումների կանոնադրությունները՝

➤ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կանոնադրությունը:

- Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի կանոնադրությունը:
- Տնտեսագիտության և կառավարման համահամալսարանական ամբիոնի կանոնադրությունը:
- Մաթեմատիկական կրթության գիտական լաբորատորիայի կանոնադրությունը:
- Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիայի կանոնադրությունը:
- Շախմատի կրթական հետազոտությունների կենտրոնի կանոնադրությունը:
- Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

ԽՆԴԻԲ 5.3. Որակի կառավարման համակարգի զարգացում և դրա արդյունավետության բարձրացում համաշխարհային չափանիշների /TQM/ հիման վրա:

•Մշակվել և Գիտական խորհրդի կողմից հաստատվել է ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրի մշակման և ընդունման կարգը:

ԽՆԴԻԲ 5.4. Ներդաշնակեցնել և նպատակաուղղել համալսարանի ռազմավարական նպատակների և խնդիրների իրագործմանն ուղղված ֆինանսական պլանավորումը:

•2017թ.-ին կատարվել են բյուջեի ցուցանիշների մշակում, վերլուծություն, համադրում՝ ըստ պլանավորման և փաստացի կատարման: Ուսումնասիրվել և վերլուծվել են Համալսարանի դրամական հոսքերի վրա էապես ազդող ներքին և արտաքին գործոնները:

ԽՆԴԻԲ 5.5. Բազմազանեցնել համալսարանի ֆինանսական աղբյուրները և դրանց ընդլայնումը հաստատության զարգացման կարիքներին համապատասխան:

•2017 թ.-ին Բուհը համագործակցում է թվով 5 բանկերի հետ կնքված են համատեղ պայմանագրեր:

ԽՆԴԻԲ 5.6. Ապահովել համալսարանի ֆինանսական ռեսուրսների կառավարման և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացումը:

•Վերանայվել են որոշ ստորաբաժանումների աշխատողների աշխատավարձեր՝ դրանք համապատասխանեցնելով իրենց նոր գործառույթներին և ծանրաբեռնվածությանը: Կատարված փոփոխությունների հիման վրա կազմվել է նոր հաստիքացուցակը:

ԽՆԴԻԸ 5.7. Համալսարանի կրթական ծրագրերի՝ տեղական, տարածաշրջանային ու միջազգային շուկայում պահանջարկի ցուցանիշների աճին նպաստող կրթական ծառայությունների ընդլայնում և գնային քաղաքականության կատարելագործում:

•Ուսումնասիրվել և վերլուծվել է համալսարանի կողմից մատուցվող կրթական ծառայությունների շուկան՝ դրանց ցանկի և աշխարհագրության հնարավոր ընդլայնման նպատակով, որը քննարկվել և վերլուծվել է ռեկտորատի նիստերում:

•Մշակվել է կրթական ծառայությունների գնագոյացման տնտեսապես հիմնավորված համակարգ 2019 թ. -ի համար:

ԽՆԴԻԸ 5.8. Զարգացնել և արդիականացնել համալսարանի կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համապատասխան անհրաժեշտ լսարանային ուսումնական և գիտահետազոտական լաբորատոր բազան:

Բուհում 2017թ. -ին բացվել է

- Շախմատի գիտահետազոտական ինստիտուտը,
- Կենսաբանության ակտիվ միացությունների և կենսաանվտանգության գիտական լաբորատորիան,
- Էլեկտրաաղեղնային եռակցման, սննդի և կարի տեխնոլոգիայի լաբորատորիաները,
- Պատմության և իրավագիտության ֆակուլտետում Մ. Մեխակյանի անվան լսարանը,
- Օտար լեզուների ֆակուլտետում Ա. Պուշկինի անվան լսարանը,
- Նախադպրոցական մանկավարժության մեթոդիկայի ամբիոնում «Խաղերի և խաղալիքների գիտաուսումնական կենտրոնը»,
- Սկզբնական ֆակուլտետում ձևավորվել է «Նախադպրոցական և տարրական

կրթության արդիախիկանացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի շրջանակներում 3 լսարան,
•Նույն ֆակուլտետում՝ Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնում «Մաթեմատիկական կրթության գիտական լաբորատորիան»,
•Այս պահին ինտերակտիվ դասընթաց ապահովող լսարանների ընդհանուր թիվը 120 է:

6. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՊԱՏԱԿ: Աջակցել հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին՝ նպաստելով համալսարանի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը:

✓2018 թ. նոյեմբերի 1-ից մինչ 2019 թ. նոյեմբերի 1-ը Ռադիո Ֆաման ունկնդրել են 4 566 000 ընդամենը 76 100 ժամ:

✓Միացումների քանակը՝ 260 650: 122 776:

✓Ռադիո Ֆաման լսել են 207 երկրից, որոնց թոփ հնգյակն է ՌԴ-69 593 միացում, Հայաստան-45 076, Գերմանիա-16 102 միացում, ԱՄՆ-16 794, Ֆրանսիա- 10 475միացում: Ռադիո Ֆամայի ֆեյբուքյան էջին միացած է 1521 մարդ:

✓Յուրօրյան էջն ունի 2180 բաժանորդ, դիտումների թիվը 499 հազար 822 է:

✓Պաշտոնական կայքի ֆեյսբուքյան էջի օրական դիտումների թիվը տատանվում է 1200-1400:

✓Հաջողության բանաձև հեռուստահաղորդումը հեռարձակվում է երկու անգամ ԱՏՎ-ով, երկու անգամ՝ հանրային հեռուստաընկերության արբանյակային եթերով:

✓Հաջողության բանաձևի Ֆեյսբուքյան էջին դեկտեմբերի 9-ի դրությամբ միացած է 7125

մարդ:

✓ Հաղորդումը հեռարձակվում է նաև մարզային հեռուստաալիքներով՝ Արմավիրի մարզում, Վանաձորում, Հրազդանում, Գեղարքունիքի մարզում:

ԽՆԴԻԴ 6.1. Ապահովել հասարակության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում համալսարանի առավելագույնս ներգրավումը:

• Մանկավարժական համալսարանի պաշտոնական կայքը կրթական և լրացուցիչ մասնագիտական հաստատությունների կայքերի՝ «Ինտերնետ-մրցույթ EAPU-2017» բաց մրցույթում հաղթող է ճանաչվել «Լավագույն հեռախոսային տարբերակ» անվանակարգում:

• Եվրասիական մանկավարժական ասոցիացիայի անդամ առաջատար 37 բուհերից՝ մրցույթում ՀՊՄՀ-ի պաշտոնական կայքը՝ www.aspu.am-ը, զբաղեցրել է պատվավոր 2-րդ հորիզոնականը:

• 2017 թ.-ին ԶԼՄ-ներով տեղեկատվության սփռումը մեկ ամսվա կտրվածքով կազմել է 50 տեղական ԶԼՄ-ների միջոցներով, և 20 անգամ օտարերկրյա ԶԼՄ-ներով:

• Հրատարակված սեփական տեղեկատվական և քարոզչական նյութերի քանակը կազմել է ամիսը 30, հեռարձակած նյութերը՝ ամիսը առնվազն 4 ժամ, 2017թ.-ի ընթացքում «Նորություններ» բաժնում տեղադրվել է ավելի քան 1200 նյութ:

• 2017թ.-ին տարբեր հարթակներիակտիվ գործունեության շնորհիվ /օրինակ՝ dasar.am/ ուսումնասիրվել է ՀՊՄՀ-ի մասին ձևավորվող հանրային կարծիքը:


• 2017թ.-ից առ այսօր Ռադիոյով եթեր է հեռարձակվում շուրջ 10 հաղորդում,

• Ռադիո Ֆաման լսել են 175 երկրից, որոնց թոփ հնգյակն է ՌԴ-35 510 միացում, Հայաստան 34 780, ԱՄՆ 15 039, Գերմանիա 11 953 միացում, Հնդկաստան 10981 միացում:

• Ռադիո Ֆամայի ֆեյբուքյան էջին միացած է 1404 մարդ:


• Հաջողության բանաձև հաղորդաշարը տեղադրվել է www.dasaran.am և ՀՀ ասոցիալական ապահովության նախարարության մասնագիտական կողմնորոշման վարչության պատրաստած ռեսուրսում:

•Մանկավարժական համալսարանի պաշտոնական կայքէջի ֆեյսբուքյան էջին միացած է 10190 հոգի: Օրական դիտումների թիվը տատանվում է 1000-1200:



ԽՆԴԻԸ 6.2. Բազմազանեցնել գործընկերային կապերը համալսարանի պատվիրատու կազմակերպությունների և հանրապետական հանրային կառույցների հետ:

•2017-2018 ուս.տարվա ընթացքում շրջանավարտների և պոտենցիալ գործատուների հետ կազմակերպվել է 7 աշխատանքային հանդիպում:



ԽՆԴԻԸ 6.3. Զարգացնել համալսարանի հիմնական սոցիալական ծրագրերը, ապահովել սոցիալական ծառայությունների պահպանումն ու պայմանների բարելավումը:

•2018թ.-ի նոյեմբերի դրությամբ 1100 աշխատողներ ներառվել են «Ռուսոստրախ-Արմենիա» առողջապահական ապահովագրություն ցանկում:

•Աղավնաձորի ուսումնամարզական բազայում ամառային և ձմեռային հանգստի կազմակերպում՝ 2017-2018 ձմեռ՝ 35 մարդ /աշխատակիցներ, աշխատակիցների երեխաներ, ընտանիքի անդամներ/, 2018 ամառ՝ 41 հոգի /աշխատակիցներ, աշխատակիցների երեխաներ, ընտանիքի անդամներ, այլ/:

7. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՅՆՈՒՄ

ՆՊԱՏԱԿ 7. Ապահովել համալսարանի արտաքին կապերի համակողմանի զարգացումը, խթանել ՀՊՄՀ գործունեության միջազգայնացումը:

Միջազգային համագործակցության զարգացմանը

Երազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրեր՝

• կրեդիտային շարժունության մասնակցած 22 արտագնա ուսանող /Ֆինլանդիա, Իտալիա, Մեծ Բրիտանիա, Ռումինիա, Լեհաստան, Հունգարիա, Ավստրիա, Իսպանիա/

•կրեդիտային շարժունության մասնակցած 3 ներգնա ուսանող՝ Իտալիա

•արտագնա 7 վարչական և 22 ակադեմիական անձնակազմի շարժունություն /Իտալիա, Իսպանիա, Ռումինիա, Լեհաստան, Մեծ Բրիտանիա, Չեխիա, Հունգարիա, Պորտուգալիա, Ֆինլանդիա/

•ներգնա 12 վարչական և 26 ակադեմիական անձնակազմի շարժունություն /Իտալիա, Իսպանիա, Ռումինիա, Լեհաստան, Մեծ Բրիտանիա, Չեխիա, Հունգարիա, Պորտուգալիա, Ֆինլանդիա /

Այլ շարժունություն`

- 5 ակադեմիական և կրեդիտային շարժունություն Ռուսաստանի հետ (Հարավային դաշնային համալսարան` ներգնա` 1 միջազգային համագործակցության աշխատակից, 1 պրոֆեսոր, արտագնա` 3 ուսանող):
- 21 շարժունություն Շվեյցարիայի հետ (Ցյուրիխի արվեստների համալսարան` ներգնա` 8 ուսանող, 2 դասախոս, արտագնա` 1 վարչական աշխատակից, 8 ուսանող, 2 դասախոս):
- 3 շարժունություն Չեխիայի հետ (Պորդուբիցեի համալսարան` ներգնա 3 ուսանող);
- 5 շարժունություն Հունգարիայի հետ (Բուդապեշտի Պիտեր Պազմանի Կաթոլիկ համալսարան` ներգնա 5 ուսանող):
- 5 շարժունություն Ճապոնիայի (Սագայի համալսարան` ներգնա 1 դասախոս և 4 ուսանող):

Օտարերկրյա դիմորդներ

•ՄՀԲ-ն իրականացրել է նաև թվով 65 պարսիկ ուսանողների գործերի ընդունում, գրանցում, տվյալների էլեկտրոնային կառավարում և կացության քարտերի ստացում ՀՀ Անձնագրային և վիզաների վարչությունից:

ԽՆԴԻԸ 7.1. Ընդլայնել և բազմազանեցնել համալսարանի միջազգային կապերը, խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:

•2018թ.-ի հոկտեմբերի դրությամբ համագործակցություն է հաստատվել տարբեր երկրների 8 համալսարանների հետ:

Ընդլայնվել է ՀՊՄՀ համագործակցությունը ՄԱԿ-ի կառույցների հետ (UNESCO, UNICEF, UNECE, UNDP, GEF)

•«Լեռնային երկրների կայուն զարգացում և ռեսուրսների կառավարում» ծրագրի

իրականացում Ավստրիական Զարգացման Գործակալության աջակցությամբ:

• «Ճանապարհի դեպի ներառականություն» ծրագրի իրականացում UNICEF-ի ֆինանսավորմամբ ՀՊՄՀ-ի և ԱՄՆ Մինեսոտայի համալսարանի միջև:

• Ներառական կրթության ոլորտում աշխատող մասնագետների պատրաստման և գործող մասնագետների վերապատրաստման դասընթացների հզորացում» UNICEF-ի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագիր:

• Միջազգային համագործակցության ծրագրերում ներգրավված է 8 ֆակուլտետներ:

• Զարգացվել և ընդլայնվել է ՀՊՄՀ-ի միջազգային ամառային դպրոցի աշխարհագրությունն առկա է օտարերկրյա բուհերի թվի աճ 8 բուհ /Ռուսաստան, Բելառուս, Լիտվիա, Ֆինլանդիա, Հունգարիա, Չինաստան/:

• Օտարերկրյա ուսանողների թվի աճ մոտ 100 ուսանողներ արտերկրից:

• Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հետ մագիստրոսական 1 համատեղ կրկնակի դիպլոմով կրթական ծրագրի իրականացում /Պատմության մասնագիտացում/:

• Համալսարանի ուսանողների մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին, /նախորդ ռազմավարական ժամանակահատվածի հետ համեմատած/ մասնակցության թվի աճ 10% -ով:

• Գիտամանկավարժական կազմի միջազգային փոխանակման ծրագրերին, /նախորդ ռազմավարական ժամանակահատվածի հետ համեմատած/ մասնակցության թվի աճ 11% -ով:

Համաձայնագրերի հիման վրա իրականացվող դասավանդողների փոխանակման ու շարժունության տվյալներ

		Դասավանդողների ներհոսք		Դասավանդողների արտահոսք	
		2016-2017	2017-2018	2016-2017	2017-2018
1	Հունգարիա, Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարան	3	2	5	2
2	Չեխիա, Պարդուբեցեի համալսարան		1	3	4
3	Լեհաստան, Վարշավայի Էլյոզգիայի և կառավարման համալսարան		2	1	
4	Ռումինիա, Տրանսիլվանիայի Բրաշովի համալսարան		1		
5	Պուշկինի անվան ռուսաց լեզվի ինստիտուտ		1		
6	Բուլղարիա, Ռուսեի համալսարան			1	
7	Լիտվա, Կրթական գիտությունների համալսարան			1	
8	Ֆինլանդիա, Օուլոյի համալսարան			2	2
9	Մեծ Բրիտանիա, Կլիվ համալսարան				1
10	Ռումինիա, Սպիրու Հարեթի անվան համալսարան				2

		Ուսումնառողների ներհոսք		Ուսումնառողների արտահոսք	
		2016-2017	2017-2018	2016-2017	2017-2018
1	Հունգարիա, Պիտեր Պագմանի անվան կաթոլիկ համալսարան	5		7	3
2	Չեխիա, Պարրոլբիցեի համալսարան		2	2	
3	Լեհաստան, Վարշավայի Էլոյզիայի և կառավարման համալսարան			1	1
4	Ռումինիա, Տրանսիլվանիայի Բրաշովի համալսարան				1
5	Իտալիա, Սալերնոյի համալսարան				2
6	Բուլղարիա, Ռուսեի համալսարան			2	
7	Գերմանիա, Քեմֆինգի տեխնիկական համալսարանտովա, Կրթական գիտությունների համալսարան			2	
8	Ֆինլանդիա, Օուլոյի համալսարան				2
9	Մեծ Բրիտանիա, Կիլի համալսարան			1	1
10	Ռումինիա, Սպիրու Հարեթի անվան համալսարան			4	
11	ԱՄՆ, Պենսիլվանիայի "HAWK MOUNTAIN SANCTUARY's ACOPIAN Center"				1
12	Ֆրանսիա, Լիլի մանկավարժական Բարձրագույն դպրոց,			1	

•2017-ից բարելավվել է Համալսարանի միջազգային գործունեության տեղեկատվական համակարգը – www.interdep.aspu.am•

•2017-2018թթ, Ֆակուլտետների միջազգայնացման համար պատասխանատու աշխատակիցների հետ անցկացվել է շուրջ 15 հանդիպում և վերապատրաստում:

•Օտարերկրյա հրավիրված դասախոսների մասնակցության թվի աճ 40 %-ով:

•Ամառային դպրոցի վերամշակված կրթամշակութային ծրագրեր•

ԽՆԴԻԲ 7.2. Ընդլայնել համալսարանի միջազգային գիտական համագործակցությունը, ձգտել համալսարանի ներգրավվածները եվրոպական հետազոտական տարածքին:

•Միջազգային պարբերականներում տպագրված հոդվածներից 114-ը գիտական հղումների ռուսաստանյան ցուցիչում (РИНЦ) են, իսկ մյուս 50-ը՝ միջազգային պարբերականներում կամ գիտաժողովներում, որոնք ներգրավված են Web of science, Web of knowledge, Scopus, British Library և այլ հեղինակավոր շտեմարաններում:

• Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հետ կնքված լայնածավալ համագործակցային ծրագիր:

• 2018թ.-ին լույս է տեսնելու «Հատուկ կրթության հիմնախնդիրներ» գիտամեթոդական հանդեսի անգլալեզու տարբերակը: Հավակնում է ընդգրկվել Scopus-ի շտեմարանում:

• Մշակվել է «MODEST – Modernization of Doctorate Education in Science and Improvement of teaching methodologies» ծրագիրը միտված դոկտորական կրթության մոդեռնիզացիայի և դասավանդման մեթոդաբանության բարելավմանը:

ԽՆԴԻԸ 7.3. Նպասատել օտարերկրյա ուսանողների համակազմի աճին ՀՊՄՀ-ում:

• Բուհի 5 ֆակուլտետներում մշակումների ավարտման փուլում են գտնվում առկա ՄԿԾ-ների անգլերեն և ռուսերեն լեզուներով դասավանդման տարբերակների մշակումը:

• Պաշտոնական կայքում մշտապես լուսաբանվել են նաև օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունը, պաշտոնական այցերն ու հետագա գործընկերության ուղենիշները: Դիմորդ բաժնում առանձնացված է «Օտարերկրյա դիմորդ» բաժինը՝ սփյուռքահայ և օտարերկրյա ուսանողների համար նախատեսված ընդունելության ուղեցույցով, ներկայացվող փաստաթղթերով և կացության կարգավիճակի վերաբերյալ մանրամասներով:

• Օտարերկրյա դիմորդների համար տեղեկատվական պորտալի ստեղծում – www.interdep.aspu.am

• 2018թ.-ին բուհը ունեցել է 46 սփյուռքահայ դիմորդ: Ընդհանուր քանակը՝ 186:

2020թ.-ի ՌԾ-ՈՎ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՈՐՈՆՔ ՀԵՏԱԶԳՎԵԼ ԵՆ ՀՀ-
ՈՒՄ ՏԻՐՈՂ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ ԵՎ
ԿԸՆԴԳՐԿՎԵՆ 2021-2025 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1

ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

1. Բարելավել կրթական ծրագրերում հետազոտական գործունեության իրականացման, գնահատման և արդյունքների վավերացման համակարգերը:
2. Ստեղծել և գործարկել մասնագիտական զարգացման դպրոցներ:
3. Բարելավել սովորողների հետազոտական աշխատանքների ղեկավարման մեխանիզմները կրթական ծրագրերի մակարդակներում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2

ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Ստեղծել և խրախուսել համապատասխան գիտական հարթակ-շտեմարաններին ինտեգրված կառույցներ: /Գիտական հարթակ - շտեմարաններին ինտեգրված 4 կառույցների/:
2. Մշակել կարիքների հետազոտման համակարգեր գիտական կադրերի պատրաստման և վերապատրաստման նպատակով:
3. Նպաստել արտասահմանյան կադրերի պատրաստմանը համալսարանի գիտական բազայի հիման վրա:
4. Մշակել մտավոր սեփականության՝ որպես տնտեսական ռեսուրսի շրջանառության մոդելներ:
5. Ստեղծել համալսարանի աշխատակիցների հեղինակային իրավունքների պաշտպանության, գիտական աշխատանքների իրավական պաշտպանվածության և

նորմատիվ ակտերի ապահովման ձևաչափեր և պայմաններ:

7. Ապահովել համալսարանի աշխատակիցների մտավոր գործունեության արդյունքների ներդրման հաշվին ստացված արտաբյուջետային միջոցների աճ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

1. Իրականացնել մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացման ծրագիր և մշակել հայեցակարգ:
2. Կազմակերպել վարչակազմի կատարելագործման գործընթաց՝ կառավարման նոր մեթոդների, բուհական կրթության բարեփոխումների, տեղեկատվական կառավարման համակարգերի յուրացման և ներդրման ուղղությամբ:
3. Ներդնել վարչական, ուսումնասօժանդակ, տեխնիկական տարակարգերի աշխատողների ատեստավորման համակարգ:
4. Սահմանել չափորոշիչներ ՀՊՄՀ վարչակազմի և այլ աշխատողների հաստիքների պլանավորման և վերջիններիս ներկայացվող որակական պահանջների ձևավորման համար:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 4

ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԱՌՈՂՆԵՐ

1. Ստեղծել հեռավար մասնագիտական կողմնորոշման համակարգ Հայաստանում և ԱՊՀ երկրներում:
2. Մշակել և ստեղծել դպրոցականներին գրավող և օգտակար էլեկտրոնային կրթական բովանդակությամբ էլեկտրոնային ցանցային ակադեմիա:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 6

ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ստեղծել «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի անգլալեզու էլեկտրոնային հավելված:
2. Ստեղծել սեփական հեռուստատեսային և ռադիոհաղորդաչափեր, համալսարանի ինտերնետային հեռուստատեսություն, համագործակցել տարբեր հեռուստատեսային և ռադիոընկերությունների հետ:
3. Ապահովել հանրային կապերի ոլորտում համալսարանի գործողությունների մշտադիտարկումը՝ PR գործունեությունն առավել արդյունավետ և նպատակային դարձնելու նպատակով:
4. Կազմակերպել հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ համալսարանի գործունեությունը հասարակության արդի պահանջներին համահունչ դարձնելու նպատակով:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 7

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

1. Արտասահմանյան առաջատար բուհերի հետ երկարաժամկետ համագործակցության պայմանագրերի թվի աճ առնվազն 20% -ով:
2. Համատեղ կրթական և հետազոտական առնվազն 5 ծրագրեր:
3. Նպաստել համալսարանի ուսանողական կազմակերպությունների արտաքին կապերի զարգացմանը և ներգրավմանը միջազգային կազմակերպություններում և ծրագրերում: Ուսանողական կազմակերպությունների ներգրավվում առնվազն 1 միջազգային կազմակերպությունում և 1 ծրագրում: